ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԻՄՊԻՉՄԵՆՏ» ԴԱՇԻՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ՄԻՋՆՈՐ-ԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Տարբեր հեռուստաընկերություններից՝ նրանց կողմից հեռարձակված նախընտրական քարոզչությանը վերաբերող հեռուստահաղորդումների տեսագրությունները պահանջելու, ինչպես նաեւ նրանց կողմից սահմանված առեւտրային եւ քաղաքական գովազդի սակագները պահանջելու մասին միջնորդությունը մերժել, նկատի ունենալով, որ գործում առկա նյութերն ունեն բավարար ապացուցողական նշանակություն համապատասխան եզրակացություն անելու համար:

2. «Բարգավաճ Հայաստան» եւ Հայաստանի հանրապետական կուսակցություններից՝ իրենց անդամների անձնական տվյալները պահանջելու մասին միջնորդությունը մերժել, քանի որ դրանում նշված պահանջն իրավաչափ է, չի բխում «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներից եւ այն չի առնչվում գործի քննության առարկային:

3. ՀՀ Նախագահից՝ ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ տվյալներ պահանջելու մասին ներկայացված միջնորդությունը մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 05.06.2007թ. թիվ 007-2717 գրությամբ տրված պատասխանն այն մասին, որ ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների ընդհանուր հաշվառում չի իրականացվում:

4. Հանրային հեռուստաընկերությունից եւ Հանրային ռադիոյից տեսագրությունների եւ ձայնագրությունների պահանջի վերաբերյալ միջնորդությունը մերժել, նկատի ունենալով, որ դատաքննության ընթացքում հետազոտված նյութերը բավարար պատկերացում են տալիս տվյալ միջնորդության մեջ ներկայացված խնդրի վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

7 հունիսի 2007 թվականի
ՍԴԱՈ -81